


891.995

Ա-30

ար

Վ. ԱՅԳԵԿՑԻ

ԱՐՅՈՒԹԸՆ ԱԴՎԵՏԱՆ



ՈՒ

ԱՐՅՈՒԹ

Z U 3 M E S Z R U S
ՏԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ԱՎԼԿԱԿԱՍ. ԳՐԱԿԱՆ. ԲՈՒԺԵ
ՅԵՐԵՎԱՆ
1940


08.08.2013

12912



W

2011-07



Մի անգամ առյօւծը հիվանդացավ և
բոլոր կենդանիները յեկան նրան տեսու-
թյան, բայց աղվեսն ուշացավ:

Աքջն սկսեց բամբառել ու չարախոսել
աղվեսի մասին: Հենց այդ ժամանակ աղ-
վեսը հասավ և զռան մոտ լսեց արջի չա-
րախոսելն իր մասին: Աղվեսը ներս ընկավ
ու փովեց առյօւծի վոտքերի առջև:



1888

ԿՍ

Առյուծը չարացած ասաց.


— Վաս ժամանակ յեկայ, զարշելի
արարած, ուր եյիր մինչև այժմ:

Աղվեսը պատասխանեց.

— Ով հզոր տոյուծ իզուր ես բար-
կանում. քո գլխովն եմ յերդվում, զոր քո
հիվանդության մասին լսելով՝ յես յեղա-
բազմաթիվ բժիշկների և բժշկապետների
մոտ, այդ պատճառով ել ուշացաւ. Բայց իմ
չարչարանքների պտուղն այն յեղափ, զոր
իմացա, թե վորն ե քո բժշկության զեղը:

Առյուծը մեղմացավ և ասաց.

— Ա՛, բարով ես յեկել, զու իմաստուն
կենդանի, իսկ բնչ ե այդ դեղը:



— Շատ պետքական ու հեշտ դեղ ե,
պատասխանեց աղվեսը: Բժշկապետներն
ինձ ասացին, թե պետք ե կենդանի արջի
մորթին հանել և տաք-տաք գցել առյուծի
վրա: Մորթին հիվանդի մարմնից իսկույն
կքաշի, կհանի ցավը:

Առյուծի հրամանով անմիջապես բրո-
նեցին արջին և սկսեցին մորթին հանել:

Արջը ախ եր անում, վայ տալիս և
գոռում ու վոռնում սարսափելի ձայնով:

Այն ժամանակ աղվեսն ասաց նրան:

— Տեղն ե, զա դեռ քեզ քիչ ե. այդ-
պես պետք ե վարվել քեզ հետ և նրանց
հետ, ովքեր զուր չարախոսում են:



«Ազգային գրադարան



NL0401590

12912

ԳԻՆ 60 Կ.

Նկարները, ինքնուս Աղ. Շահվերդյանի
Պատ. խմբագիր՝ Վ. Գլիգորյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Լիտո-նկարիչ՝ Ս. Գասպարյան
Մրգագրիչ՝ Ա. Փարազանյան

Գլավիտի լիազոր՝ Բ—1078. Հրատ. 5177.
Պատվեր 212. Ցիֆրա 5000.

Հայագետներակի տպարան, Յերևան, Խնձորեսկ, 63.

В. АЙГЕКЦИ

Лев, лисица и мышка
Гиз Ари. ССР, Ереван, 1940